1897

ԹԻՒ Բ· ՓԵՏՐՈՒԱՐ

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՐԱՐԱՏ



ՏՊԱՐԱՆ Մ· ԱԹՈՌՈՅ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

կութիւն մօտ 10,000 հայ և ասորի տառապեալ պանդուխտների համար, որոնք Տաճկաստանի սահմանին կից Պարսկաստանի հողումն են այժմ և նեղութեան մէջ են։ Բացի այդ Ֆրանկֆուրտի և Բեռլինի յանձնաժողովները կուղարկեն Հայաստան գերմանացի կանայք՝ մանաւանդ բժիշկներ։

Պաստոր Լօհմաննի և պաստոր Լեպսիուսի, ինչպէս և հետևեալ բանախօսութեանց մասին եղած խօսակցութիւններից երևաց, որ բոլորը միաբան են հայ քրիստոնեաների հալածմանց պատճառների, ինչպէս և տառապանքների առաջն առնելու եղանակի նկատմամբ։ Բանախօսութիւններն էին. «Ի՞նչպէս կարող ենք ամենալաւ կերպով Հայաստանում սովի առաջն առնել» (պաստոր Ցելլէր). «Հայաստանում քրիստոնեաների հալածանք է թէ ոչ» (պաստոր Լից. Վեբեր). «Ի՞նչպէս պէտք է 20,000—30,000 հայ որբերին խնամել» (պաստոր Զիրօլդ), և «Աւետարանական միսիան Արևելքում» (պաստոր Դիսսելհօֆֆ)։

Երկօրեայ բանավարութիւնից յետոյ երևաց, որ հետևեալ հիմունքներով պիտի ղեկավարուեն.

1. Եթէ մենք արդիւնաւէտ կերպով մրցել ենք կամենում Հայաստանի սովի առաջն առնելու համար, պէտք է ամենից առաջ պահանջենք, որ վերջապէս այժմ հայոց չարչարանքները դադարեն, և մի կերպ խաղաղութիւն հաստատուի փորձանքի ենթարկուած նահանգներում։ Մեր գործը Դանայեան [1] ապարդիւն աշխատութիւն կլինի, եթէ մենք այս խնդրում ոչինչ ձեռք չբերենք։

2. Մեր օգնութեան գործում պէտք է առաջնորդուինք այն սկզբունքով, որ վհատուած բայց կենսունակ և փութաջան հայ ժողովուրդին ինքնօգնութեան միջոցներ տրուին։

3. Ուստի մեր ջանքերն սկզբունքով պէտք է ուղղուած լինին ոչ այնքան առանձին տառապեալների, ուրեմն առանձին առանձին որբերի՝ իրենց նեղ վիճակից ազատելու, այլ աւելի հայ ազգի ընդհանրութեան օգնելու։ Տառապանքի դէմ պէտք է կռուենք նոյն իսկ տառապեալ երկրում, որպէսզի այս հին քրիստոնեայ ժողովուրդը իւր բնիկ երկրում կենդանի մնայ։

4. Բացի սովեալներին և ցրտատարներին սնընդեան կարևոր միջոցներ, զգեստներ և անկողիններ հայթայթելուց, կարևոր է թշուառացած գաւառներում օգնել մարդկանց, որ իրենց աւերակ դարձած տները նորոգեն։ Սերմացու և գործիքներ պէտք է ձեռք բերել և արհեստագիտական ձեռնարկութիւններով աշխատանքի միջոց տալ։ Օգնութեան այս գործը պէտք է ղեկավարեն և սորա վերայ հսկեն Եւրոպացի տղամարդիկ և կանայք։

5. Մեր գերմանական օգնող դաշնակցութեան համար արդէն ճանապարհը ցոյց է տրուած. մի քանի կենդրոնական կայարաններում, ուր արդէն որբեր են ընդունուած, պէտք է բաւական թուով գերմանացի գործիչներ նշանակել և այն տեղերից սկսել շրջակայ գաւառներում գործել։

6. Եւ որովհետև Թուրքիոյ սահմանակից երկրներում ևս փախստականների մէջ սով է տիրում, ուստի այս տառապեալներն էլ օգնող դաշնակցութեան պաշտպանութեան կարօտ են։

7. Օգնութիւնը պէտք է արագահաս լինի։

Համաժողովի երկօրեայ բանավարութիւնից յետոյ յունուարի 13-ին երեկոյեան Բարմէնի և Էլբերֆէլդի հինգ զանազան եկեղեցիներում և դահլիճներում միաժամանակ եկեղեցական համախմբութիւններ տեղի ունեցան, ուր 8000--10000 արտակարգ բազմութեան առաջ ոմանք խօսեցին հայ ժողովրդի տառապանքի և աւետարանական եկեղեցու պարտականութեան մասին, այդ կարիքի դէմ օգնութեան ձեռք կարկառելու։ Յունուարի 14-ին ճաշից յետոյ պաստոր Լօհման կանանցից մի ժողով կազմեց աւետարանական ընկերութեան ընդարձակ դահլիճում, ուր ասեղ ձգելու տեղ չկար և ուր նա մի զեկուցումն տուեց «Հայաստանին օգնող կանանց դաշնակցութեան» մասին։

Համաժողովի բոլոր մասնակցողները երկօրեայ խրախուսական բանավարութիւնից յետոյ հեռացան Վուպպէրի հովտից այն համոզմամբ, որ օգնող դաշնակցութեան և հայոց գործի բարեկամների շնորհիւ աւետարանական եկեղեցու բոլոր մասերում իսպառ խզուած է այն կապանքը, որ ցարդ պղտոր աղբիւրներից օգտուող մամուլի շնորհիւ կաշկանդում էր Գերմանիոյ հասարակական կարծիքը։

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑ ՁԱՅՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ.

Բեռլինի Singakademie-ի (երաժշտական մի հաստատութիւն է, ուր երգեցողական երեկոյթներ են լինում. ունի իւր յատուկ երկսեռ երգեցիկ խումբը) տեսուչ Բլումների (Professor Dr. Martin Blumner) ղեկավարութեամբ տասն և երեքերորդ անգամ երգուեցաւ Գրէլլի (Eduard Grell) յօրինած տասն և վեց ձայն պատարագը։ Այս երկը յայտնի է երաժշտական աշխարհին Missa solemnis für 16 Stimmen անունով։ Երկու շաբաթ առաջ լրագրերի և սիւների վերայ կպցրած յայտարարութիւններով հասարակութեան տեղեկութիւն էր տրուած. կարճ ժամանակում բոլոր տոմսերը գնուեցան։ Singakademie-ի եռայարկ հանդիսասրահը լի էր հասարակութեան երկսեռ ընտիր դասակարգով։

---

1. Եգիպտոսից փախած Արգոսի Թագաւոր Դանայոսի 50 դուստրներն իրենց ամուսիններին սպանելու պատճառով դատապարտուած էին յաւիտեան Սանդարամետում ջրով լցնել մի ծակոտուած տակառ։ „Դանայեան աշխատութիւն„ նշանակում է ուրեմն ապարդիւն աշխատութիւն։

Պատարագը գրուած է 16 մարդու ձայնի համար, առանց նուագածութեան մասնակցութեան, մէջ ընդ մէջ բարեխառնած 1—16 ձայն երկսեռ խմբակներով (solo): Պատարագը բովանդակում է եօթն կտոր. խօսքերը լատիներէն պատարագամատոյցից են առած.

1. Kirie eleison (Տէր ողորմեա).—2. Kriste eleison (Քրիստոս ողորմեա).—3. Kirie eleison.—4. Gloria in excelsis Deo (Փառք ի բարձունս, մինչև Եւ յամենայն ժամ-ը).—5. Credo in unum Deum (Հաւատամք ի մի Աստուած). 6. Sanctus, Sanctus, Sanctus (Սուրբ, Սուրբ, Սուրբ).—7. Agnus Dei (Գառն Աստուծոյ).

Գէօթէն երաժշտութիւնը համարում է մարդու համար եզակի, աստուածապարգև շնորհ. Ցիրաւի Missa Solemnis-ը իւր սրտաբուղխ, գեղուն, վեհաշունչ, քաջաձայն ներդաշնակութեամբ ամենափայլուն կերպով արդարացնում է այդ գաղափարը. Այն ամենը, ինչ որ գեղեցիկ է և հրաշագան երկրիս վերայ, միացնում է կարծես իւր մէջ երաժշտական այս զօրաւոր երկը ազատ գեղգեղանքներով վեր տանելու, երկնայինի հետ զուգորդելու համար.

Երբեք «տէր ողորմեա»ները սկսւում են մեղմիկ միայնակ երգեցողութեամբ, որ մերթ ընդ մերթ բարեխառնում է ամբողջ խումբը.

Ինչպիսի՛ վեհագոյն, հիասքանչ փայլեցութեամբ վեր է սլանում ապա «Փառք ի բարձունս». Ինչպիսի՛ երկիւղածութեամբ և յուսով թրթռում է քրիստոնէի սիրտը, երբ «Հաւատամք»-ի «Չարչարեալ, խաչեալ, թաղեալ» խորախորհուրդ խօսքերը տխրայոյզ ալիքներով պատում են նորան. Ինչպիսի՛ զուարթութեամբ և բաւականութեամբ լցւում է հոգին և ինքնաբեր ուրախութեան ժպիտ է ցոլում դէմքի վերայ, երբ լսում է յարութեան փողը.

Բայց հայ մարդու ուրախութիւնն աւելանում է և կուրծքը փքւում է արդա՛ր հպարտութեամբ, երբ լսում է «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց» սերովբէական փառաբանութիւնը. Նա մոռանում է բոլոր նախկին տպաւորութիւնները՝ առ ժամանակ, առանց զգալու թէ ի՞նչ է կատարւում իւր շուրջը, տեղափոխւում է հոգեպէս հաւատահիմըն, անսասան Լուսոյ Մօր՝ Մայր աթոռ Ս. Էջմիածնի սրբազան կամարների տակ, և լսում հայ քրիստոնէի երգած «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ»..., և հրեշտականուագ մեղեդին ազգային ներդաշնակութեամբ, հաւատակիցների երգակցութեամբ միայն խնկապէս վերացնում է նորան, շա՛տ բարձր, Ամենակալի Աթոռի առաջ հանում, կապելով նաև նորա համար երկինքն ու երկիրը.

Ո՜վսաննա ի բարձունս.

Կոմ. Վ.

ԱՄԵՐԻԿԱ.

ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ *

Կ. Պօլսից ստացուած տեղեկութիւնների համաձայն Հայոց պատրիարքարանին զանգատներ են հասնում Տաճկաստանի և Հայաստանի զանազան կողմերից՝ այն եղանակի նկատմամբ, որ գործ են դնում ամերիկական միսիոնարները, կոտորածների զոհ թշուառ հայերին օգնելու համար Ամերիկայից ուղարկուած նպաստները բաժանելիս. Հաստատ յայտնի է, որ միսիոնարները օգուտ են քաղում հայ քրիստոնեաների թշուառութիւնից, նիւթական օժանդակութեանց միջոցաւ ստիպելով նոցա բողոքականութիւն ընդունելու. Նպաստները առանց անկողմնապահութեան չեն բաշխւում, այլ տարբերութիւն է դրւում իրենց դարձրած բողոքականների և Հայոց հին առաքելական եկեղեցուն պատկանողների մէջ. Այսպիսով նոքա, որոնք ջանկանում են մասնակից լինել Ամերիկայից ուղարկուած օժանդակութեան բարիքներին, ստիպուած են բողոքական դառնալ, կամ գոնէ ձևանալ, որպէս զի հաճելի լինին միսիոնարներին.—Այդ յիրաւի մի ծանր մեղադրութիւն է միսիոնարների դէմ, բայց ովքեր նոցա ի մօտոյ ճանաչել են կամ տեղեակ են նոցա գործունէութեան եղանակին, զարմանալու ոչինչ չեն ունենայ. ուրիշ կերպ սպասել նոցանից դժուար էր. Նոյնն արին նոքա տարիներ առաջ մի ուրիշ առթիւ՝ մինչ տիրում էր 1878 թ.-ի սովը. Սակայն մեր զայրոյթն այժմ աւելի մեծ է, քանի որ այդ եղանակը նոքա գործ են դնում այնպիսի մի ժամանակ, երբ հայերը զոհ են ո՛չ թէ բնական արհաւիրքներին, այլ կրօնական հալածանքի՝ Յիսուս Քրիստոսի անուան համար.—Ուրախ եմ իմանալով, որ Օրմանեան պատրիարքը, Տաճկաստանի Հայոց եկեղեցական և քաղաքական գլուխը, ուշադրութեան է առել անյապաղ այդ զանգատները և վճռել է ձեռք առնել կրկին նպաստների բաշխման գործը, որ այնպիսի արիութեամբ յառաջ էր տարել նախկին Իզմիրլեան պատրիարքը և իւր յանկարծակի հրաժարմամբ անցեալ օգոստոսին ընդհատելու ստիպուել. Իզմիրլեան պատրիարքը ժողովեց և բաժանեց աւելի քան 100,000 դլ. առանց անտեղի փողահարութեան և աղմկալից ցոյցերի. Յուսալի է, որ նոյնն անէ նաև Օրմանեան պատրիարքը՝ նոյնպիսի յաջողութեամբ.—Ամօթ և նախատինք է, որ միսիոնարները օգուտ են քաղում մի համազգային դժբաղդութիւնից, իրենց դաւանափոխների ցանկը մեծացնելու. Չափից աւելի ձգտումն և եռանդ ցոյց տալով՝ տարածելու իրենց ազդեցութիւնը հայ ժողովրդի որչափ կարելի է աւելի մեծ մասի վերայ, նոքա այժմ աւելի ատելի են դառնում իրենց հայերի աչքում քան երբ և իցէ. Հայրս անցեալ շաբաթ մի խնդիր ստացաւ Էվերիկի Թաղական խորհրդից, ուր տեղի է

* The Sun. 24 յունուար 1897. Թարգ. Ար. Վարդանեան.